ԹԻՒ 1322 ՏԱՐԻ ՋՈՐՔՕՏԱՍԱԿ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1883 ՄԱՅԻՍ 16

ԱԱՅՐԵՆԻՔ

15 փարա

ՕՐԱԹԵՐԹ

15 փարա

Հայրենիքի թուեն օր կը հրատարակուի, առաքման գինն է Օսլոյ եւ գաւառաց համար 7 արծաթ մէնիու կամ երկու կրուշ։ Գաւառական տրտարութեան ծախքը մեր վրայ է։ Վճարմանայ եւ հատմանայ բաժանորդը ալ կը ցնդուհանուի։

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պետք է ուղղել առ Տէր-Խմբ[agor] գիր Բիզա փոստ խաղ թ. 44։ Խմբագրութեան ուղղեալ գիր եւ ձրագրութիւն։ Ծանուցմանց առաջին անգամի համար 3 դրուշ է։ Աւելի առ գամի համար առանձին զեղչութիւն կ՚ընուի։

ԱԶԳԱՑԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Կաթողիկոսական ընտրութեան առիթով Տաճկաստանի հայ մամուլը նորէն պարբերել է այն անվերջ խնդիրը, որը կէս դարուց ի վեր մի քար գայթակղութեան է դարձնել մեր կաթողիկոսների գործունէութեան համար։ Խօսքս պատմական խնդրի մասին է, որի մէջ մեր պօլսեցի հրապարակախօսները նկատում են հայրապետական իշխանութեան անկեալ վիճակի միակ պատճառը։ Մենք խոստովանում ենք որ Էջմիածնի կաթողիկոսութիւնը ազդի մեծամասնութեան համար Ռուսաստանից գուրս այսօր ներկայացնում է մի հասարակ վանահայրութիւն որ նորա իրաւունքները խիստ չատ ճնշուած և սահմանափակուած են իր հօտի ամենամեծ բաժնի վերաբերութեամբ, որոնք ապրում են Տաճկաստանում, բայց, ինչպէս այդ ցոյց կը տանք ներկայ յօդուածի մէջ, որոց իսկական պատճառները բոլորովին տարբեր են այն պատճառներից, ինչոր ներկայացնում են պօլսի ազդայինները։ Եւ յիրաւի ով որ փոքր ինչ աւելի ուշադրութեամբ և առանց նախապաշարման կարդացել ու քննել է այդ կանոնագրութեան յօդուածները և ով որ փոքր ի չատէ ծանօթ է այդ յօդուածների «որ փաքթօ» գործադրութեան մեր կաթողիկոսների կողմից, նա չէ կարող համզուած չը լինել որ մեր պօլսեցի համազգիների երկիւղը անտեղի է։ Մենք չենք ուսում ի հարկէ որ պատմական ըստ ամենայնի համապատասխան է մեր եկեղեցւ վաղեմի կանոններին։ Նորա մէջ կարող էին մտնել և մտել են յօդուածներ, որոնք իւր ժամանակին կարող էին ունենալ իրանց ուշադիր խորհուրդը, բայց այդ յօդուածները, ինչպէս ուրիշ անգամ ցոյց կը տանք, հետու են մեր եկեղեցւ համար այն նկատութիւնից, որը վերագրում է նորան Տաճկաստանի Հայ մամուլը։ Ներկայ ժամանակում կան աւելի ծանրակշիռ խնդիրներ, որոնք մեր կարծիքով, աւելի մտերիմ կապ ունին հայրապետական աթոռի չահերի հետ, որոնք աւելի հարկաւոր են մեր այժմեան ազգային հարցերի համար, և որոնք հետևաբար աւելի արժանի են մտածող հայերի և մա-

մուլի խորին ուշադրութեան ու քաջմտածողմանի մշակման։ Այդ տեսակ խնդիրների մէջ ամենագլխաւորը պէտք է համարել «ընդհանրական Հայրապետի յարաբերութեան խնդիրը Տաճկաստանի Հայերի հետ»։

Այդ խնդիրը նոր չէ ընթերցող հասարակութեան համար. դեռ ևս 1881ին փորձի 1 համարում տպուեց մի յօդուածք «Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռը և Տաճկաստանի Հայք» վերնագրով, որ բաւական մանրամասն կերպով նկարագրում էր Էջմիածնի կաթողիկոսի և Տաճկաստանի եկեղեցականութեան յարաբերութիւնները։ Բայց իւր ժամանակին այդ յօդուածը գժբաղդաբար հարկաւոր ուշադրութիւն չը գրաւեց ոչ Ռուսաստանի և ոչ Տաճկաստանի Հայ մամուլի կողմից։ Կաթողիկոսական ընտրութեան խնդիրը մի դեղեցիկ առիթ է ներկայացնում նորից արծարծելու և մշակելու այդ հարցը, որի նշանակութիւնը և առաւել մեծ և ծանրակշիռ է ներկայում, երբ աւելի ևս զգալի է մի սերտ միութեան, մի աւելի հզօր հոգևոր կեդրոնի կարևորութիւնը։

Կար մի ժամանակ, երբ՝ ինչպէս նկատդրում են ազգային և օտար պատմիչները, Հայոց ընդհանրական կաթողիկոսութիւնը այնպիսի մտերիմ կապերով կապուած էր իւր հօտի հետ, նորա իշխանութեան գաղափարը այնպէս մարմնացած էր ժողովրդի հասկացողութեան մէջ, որ հայը, չը նայելով իւր ցրուած և գանազան պետութիւնների մէջ բաժան բաժան եղած վիճակին ներկայացնում էր մի ամբողջ ազգային հոգևոր մարմին, կաթողիկոսը ներկայացնում էր մի կեդրոն, որի մէջ ամփոփուած էին այդ ամբողջութեան բոլոր հոգևոր ձգտումները, երևելի ճանապարհորդ Շարդէնի առելով «նա նմանում էր մի մոգական ջուաղացի, որի չարժուելով չարժուում էր նաև ամբողջ ազգը»։ Մի դրութիւն, որից հայրապետական իշխանութիւնը իւր ներկայ վիճակով ի հարկէ չատ հեռու է և տարբեր է։ Զը խօսելով այլ ևս «մոգական ոյժի» մասին, նորա ազդեցութիւնը այսօր չէ տարածուում մինչև իսկ իւր հօտի ամբողջութեան վերայ։ Ազգի մեծագոյն մասը, որ ներկայ ժամանակում գանուում է օսմանեան իշխանութեան տակ, եթէ ոչ բոլորովին անկախ դանէ

չատ թոյլ կապերով կապուած է իւր ընդհանրական առաջնորդ գլխի հետ։ Այն օրուանից երբ Սուլթան Մահմմէդ Բ. ը տիրելով Կ. Պօլսին հրաւիրեց Բրուսայի Յակինթ եպիսկոպոսին այնտեղ և կարգեց Պատրիարք իւր իշխանութեան տակ եղող բոլոր հայերի վերայ, առաջին քաղաքն հարուածը տրուեցաւ ընդհանրական հայրապետի նշանակութեան և ազդեցութեան։ Այնուհետև Պօլսի պատրիարքները իրանց անհեռատես և փառատէր բնաւորութեամբ ձգտելով աւելի ընդարձակ անկախութեան չատ անգամ դիմում էին մինչև իսկ յայտնի ապստամբութեան իրանց հոգևոր պետերի իշխանութեան դէմ։ Յայտնի են այն դիմադրութիւնները, որով մի քանի տարի չարունակ մարքաւում էր Պօլսի Զաքարիա պատրիարքը Էջմիածնի Սիմէան և Ղուկաս կաթողիկոսների հետ։ Յայտնի են այն խռովութիւնները, որ Գրիգոր պատրիարքը և նորա փոխանորդ Անդրէաս եպիսկոպոսը յարուցին Էջմիածնի աթոռի դէմ Դաւիթ և Դանիէլ կաթողիկոսների ժամանակ։ Վերջապէս յայտնի են Մաքարիոս և Յակոբոս պատրիարքների հակառակութիւնները Յովհաննէս կաթողիկոս Կորգեցու հետ, որի անունը անգամ զլացան ըստ նախնի սովորութեան յիշատակել առ պատարագի ժամանակ։ Բ. Դաւիթ հակառակ Էջմիածնի աթոռի դարաւոր իրաւունքներին, համարձակուեց մինչև իսկ աքսորել Էջմիածնի նուիրակներին և բոլոր նորա միաբաններին Տաճկաստանի սահմաններից արգելելով այլ ևս որ դնել ասլթանի երկիրները։ Մի այդպիսի խիստ հարուածից յետոյ հարկ չը կայ ասել որ կաթողիկոսի նշանակութիւնը և ազդեցութիւնը ակաու բոլորովին նուազել Տաճկաստանի հայերի վերայից։ Այդ նուազումը վերջապէս հասաւ այնտեղ, որ երբ 1860 ին Տաճկաստանի հայերին շնորհուեց Սահմանադրութիւն, այդ Սահմանադրութեան յօդուածների մէջ գլացուեց մի կէտ անգամ որոշել այնտեղի ազգայինների և ընդհանրական հայրապետի յարաբերութիւնների վերաբերութեամբ։ Մի այդպիսի աննշան լուսութիւն ամենապարզ կերպով ապացուցանում է որ ամենայն կապ Տաճկաստանի հայերի և Էջմիածնի կաթողիկոսութեան մէջ խզուած, ոչնչացած է։ Բոլոր յարաբերութիւնը այսօր կայանում է մի միայն

ՂԱՖՂԱԶ

Չլիտեի Իսկական Լուսաբանիչը Հեռագրեց Հետևյալ Հեռագիրը Նվիրատվության Մասին.

«Մոսկվա 21 Հունվար Հետևյալ Հեռագիրը Ստացվեց Ես Ուղարկում Եմ Ձեզ Ամբողջ Գումարը Ինչ Հավաքվել Է Ձեր Կոչի Համաձայն։ Ես Ուրախ Եմ Որ Ես Կարող Եմ Ձեզ Օգնել Ձեր Ազնիվ Գործում։ Ես Ձեզ Կուղարկեմ Ամեն Ինչ Որ Կհավաքվի Ինձ Համար Ուղարկված Նամակներից Եվ Հեռագրերից

այնպէս որ բաղաքական հատարակութիւնը երկու կատակցութեան բաժնուած է։ Զօրս միսիոնար որոց երկուքը ամերիկացի և միւս երկուքը բաղաքական Հայ են, մայրաքաղաքս հասան հարկ եղած քննութիւնը կատարելէ վերջը վերոյիշեալ վէճը բառնալու համար։

— կեսարիայէն կը գրեն, կըսէ Մօնիթէօր, թէ Աւետիս անուն անձ մը կը քարոզէ եղեր թէ Հայոց եկեղեցւոյն և կանոնաց ու ծիսից մէջ բարենորոգութիւններ ընել անհրաժեշտ է։ Սակայն այս քարոզութիւնը խափանուեր են. վասն զի Աւետիս 3-600 հոգի գլուխը ժողվելով քարոզած առեն ասիկանութիւնը միջամբեր և քարոզիչը բառնալով ընդ հակողութեամբ էնկիւրիու ղրկեր է։

ԹԱԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Մանկաւարէն Ռուսիոյ դեսպանատուն հատած հեռագիր կը ծանուցանէ թէ Զարին թագադրութեան հանդէսը երէկ առաւօտ սկսելով կէս օրէն մէկ ու կէս ժամ վերջը աւարտեր է։ Հանդէսը նմանը չը տեսնուած չքեղութեամբ կատարուեր է։

Մայրաքաղաքիս առւտական դեսպանատունն ալ այս առթիւ մեծ հանդէս մը տեղի ունեցաւ երէկ։ Մատրան մէջ գահաբանական աղօթք կարդացուելէ վերջը, դեսպանատան մէջ փառաւոր հացկերոյթ մը տրուեցաւ ներկայ եղող հիւրերուն։ Բոլոր դեսպանք իրենց համազգեստով թէ մատրան մէջ կատարուած բարեմաղթութեանց և թէ հացկերոյթին ներկայ գտնուեցան։ Սեղանէն վերջը Գ. Օնու և իւր տիկինը համաձգեստով ընդունելութեան սրահը մտնելով, բոլոր հիւրերը պատուասիրեցին։ Վեհ. Սուլթանն ալ ի նշան յարգանաց առ Ռուսիոյ կայսրն, պալատան պաշտօնեաները ղրկեց դեսպանատունը, նախարարներէն չատեր ալ ներկայ էին հանդիսին։ Կայս. պալատէն յատկապէս ղրկուած նուագախումբերու խումբ մը դեսպանատան պարտիզին մէջ ընտիր նուագներ կը զարնէր։ Թէ Գ. Օնու և թէ իւր տիկինը սիրալիր քաղաքավարութիւն ցուցին հրաւիրելոց։ Մայրաքաղաքիս նաւահանգիստը գտնուած նաւերը ալ դրօշակներ պարզեցին և արքունի նաւերէն թնդանօթներ արձակուեցան։

— Երէկ նախարարաց ժողով ըլալով, մաքսատան գործիքներու փոփոխութեան մասին ամերիկեան դեսպանին բաղաքագիրը նկատողութեան առնուցաւ և որուելիք պատասխանին վրայ խորհրդակցութիւն եղաւ։ Այս խնդրոյն մէջ Գերմանիա Բ. Դրան մեծապէս կը նպաստէ եղեր։

— Վազքի կըսէ թէ Աւստրիոյ դեսպանը Բ. Դրան հետ այս օրերս ամենակարեւոր բանակցութիւններ կընէ. առկայն բանակցութեան նիւթը դեռ յայտնի չէ։

— Զմիւռնիոյ կառավարի տեղակալը կը հեռագրէ թէ ապստամբաց պահանջած փրկանքը վճարուելով դերեզմանը ազատեր են, և կայսերական զօրքը աւազակները հալածել սկսեր է։

— Մասկուալէն 26 մայիս թուակիր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Զարին թագադրութեան առթիւ ըլալիք յայտարարութեան մէջ Բոլանիացի քաղաքական յանցաւորաց ներում պիտի շնորհուի։ Ասկայն աքսորէ վերադարձողները երկու տարի ոստիկանաց հսկողութեան ներքև պիտի մնան։ Դարձեալ բաղմաթիւ ազ քաղաքական գատապարտեալք պիտի արձակուին, և դրամական տուգանաց գատապարտուողներուն չնորհ պիտի ըլլայ։ Շատ մը աղքատ գաւառաց անվճարհարկերն ալ պիտի չնորհուին։

Սակայն յայտարարութեան մէջ բարեկարգութեան խօսք չկայ բնաւ։

— Արևելեան-Րումէլիի շատ մը տեղեր գեռերը յորդելով հողերը ողողեր են, որով հողագործաց մեծ վնաս ըլալէ զատ 3 այր և 6 կին ջուրերու մէջ խղդուեր են։

— Գանձուց պաշտօնէին խորհրդական վէթենաօրճի պէյ, չարժուն պարտուց համար ծրագիր մը ներկայեր է Բ. Դրան որ կը արամադրէ 27 միլիոն ոսկիի չարժուն պարտքը համեմատաբար զեղչելով, անշարժ պարտուց նման անոնց հատուցումը երաշխաւորել։

— Սթամպուլ վանայ մէջ երեք հարիւր Հայոց ձերբակալութիւնը հատատեալով կըսէ թէ ձերբակալութիւնը քաղաքական յանցանաց պատճառաւ եղած չէ, այլ Հայոց և քիւրտերու մէջ ծագած կռուէ մ'առաջ եկած է։

ծի ուշադրութիւն չե՞ս ըներ բնաւ իբր թէ ես քու ժպրդ չը լինէի . . . Միայն Տընիզը կը գրկես և անոր կը նայիս . . . Ինչ ըրին քեզի . . .

Մռայլաճառը նապօլէը մեզմիւ գրկացը մէջ առաւ և իւր սենեակը առնելով գրկեց։

— Գառիկ փոքրիկ քոյրս և աղէկ քնացիր, ըսաւ նա։

Սենեկէն դուրս ելաւ, դուռը գոցեց և մօրը հետ առանձին ձեց։

— Եկէք, ըսաւ անոր, խօսելիք ունիմ։

Անոր խաչոր և կերկերեալ ձայնը կը դողդղար։ Գաւառը առանց բան մ'ըսելու անոր ետևէն գնաց։ Աշտանակին մէջ նոր ճրագ մը դրած էր։ Ճրագը առաւ և տղուն ետևէն երկրորդ յարկը ելաւ։ Հոն էր մայրվաճառին սենեակը։ Ներս մտան։ Գաւառը աշտանակը սեղանի մը վրայ դրաւ և ինքն ալ յորդէ աթոռի մը վրայ նստաւ, անմեկնելի ոսկմամբ մը Լօրիօի նայելով։ Ակառները կը կերտէին։

— Հիմա խօսակցինք, ըսաւ երիտասարդը պլլալով ձայնով մը։

Ժ.

Մէրօնվէլ պարտիզին մէջ գարնամուտ եղած էր իւր պաշտօնեայներուն հետ որօնք պարտիզին մէջ ցըրուած էին։ Մէօտօնի կայարանը Լօրիօի սպառած էր և անոր ետևէն գացած մինչև իշխանաց փողոցը։ Երբ երիտասարդը ոպանդանոց մտաւ, անկէ բաժնուեցաւ իւր ոսվզրական պահականոցն երթալու համար։ Անմի-

հոգւոյն մէջ կատաղի կռիւ մը կամ չափազանց բարկութիւն մր կը յայտնէին։ Յայնժամ աչուընները կարմրելով գլխէն դուրս կելնէին և արիւնը անոր վզին երակները կուռեցնէր ճաթեցնելու չափ։

Սակայն տեսարանը շուտ փոխուեցաւ։

Լօրիօ ձեռքերը ծոցը դրած լուռ կը կենար, հիմա մայրը կը խօսէր . . . Ծունր դրած էր և անոր աչքեր գետնաքարշ կերթար արդւոյն արունքները թևերուին գըրկելով և գլուխը անոր խաչոր կօշիկներուն մէջը դնելով։ Նա կուլար . . . Մէրօնվէլ սուր աչքեր ունէր և կը տեսնէր անոր արցունքները որ երեսն ի վար կը հոսէին գետակի նման որոյ ակն անապատ է։ Գառւին չոր և անկիւնաւոր մարմինը հեծեծանքներով կը թօթուէր . . . Նա կաղաչէր, կը պաղատէր։ Լօրիօ չէր համարձակեր անոր նայելու և բաց պատուհանէն պարտէզը կը նայէր։

Անիկա երկար ատեն տևեց։

Յետոյ որովհետև Լօրիօ բան մը չէր ըսեր, գառւը ոտք ելաւ . . . Ձեռքերը որդւոյն պարզեց իբր զոյն գըրկելու համար, ասկայն Լօրիօ ետ ետ քաշուեցաւ և որովհետև մայրը կը պնդէր, որդին վայրենաբար զոյն անդին հրեց . . .

Յայնժամ պառաւը խենթի նման երկու երեք անդամ սենեկին մէջ պտրտեցաւ, ձեռքը ճակտին տանելով, վերջապէս անկողնոյն վրայ ինկաւ, գլուխը բարձին վրայ դրաւ և Մէրօնվէլ ա՛լ ուրիշ բան մը չը տեսաւ բայց նորա հեծեծանաց վշտալիր ձայնը։

Լօրիօ տխուր նայուածքով մը ոտքի վրայ էր միչտ և անշարժ։

Ա յդ գ

Հայկազեան Եւ Ամերիկեան Համալսարանի Ուսանողական Միութեան

ԱՐՇԱԿ–ԼՈՒՍԱՆՑԱՆ

Տարեկան Հանդէսը Տեղի Պիտի Ունենայ Ուրբաթ, Յունիս 14-ին, Երեկոյեան Ժամը 8-ին, Ֆրեզնոյի Հայկազեան Համալսարանի Մեծ Սրահին Մէջ

Տոմսերը Կարելի Է Ձեռք Բերել Հետեւեալ Վայրերէն

Ֆրեզնոյի Հայկազեան Համալսարանի Գրասենեակէն

Տոմսի Գինը Մէկ Տոլար Վաթսունհինգ Սենթ (1.65)

Կարելի Է Հեռաձայնել 10–43 Թիւով

Հանդէսի Ընթացքին Ներկայացուելիք Ասմունքներուն Համար Ընտրուած Են Հետեւեալ Գրութիւնները. «Ես Ալ Կրնամ Ապրիլ», Գրած Լեւոն Շանթի, «Ոսկի Ծիրանի», Գրած Ռուբէն Զարդարեանի, «Ես Ալ Կրնամ Ապրիլ» Գրութիւնը Ներկայացնելու Համար Ուսանողուհի Ալիս Ալեքսանեան Պիտի Հագնի Ազգային Տարազ, Իսկ «Ոսկի Ծիրանի» Գրութիւնը Ներկայացնելու Համար Ուսանողուհի Ռոզա Ալեքսանեան Պիտի Հագնի Ազգային Տարազ։

Հանդէսի Ընթացքին Ներկայացուելիք Երգերուն Համար Ընտրուած Են Հետեւեալ Երգերը. «Ես Ալ Կրնամ Ապրիլ», Գրած Ռուբէն Զարդարեանի, Երգեցողութեամբ Ուսանողուհի Ռոզա Ալեքսանեանի։ «Ոսկի Ծիրանի», Գրած Ռուբէն Զարդարեանի, Երգեցողութեամբ Ուսանողուհի Ալիս Ալեքսանեանի։

Հանդէսի Ընթացքին Ներկայացուելիք Պարերուն Համար Ընտրուած Են Հետեւեալ Պարերը. «Ես Ալ Կրնամ Ապրիլ» Գրութեան Համար Պարուհի Ալիս Ալեքսանեան Պիտի Պարէ Ազգային Պար, Իսկ «Ոսկի Ծիրանի» Գրութեան Համար Պարուհի Ռոզա Ալեքսանեան Պիտի Պարէ Ազգային Պար։

Հանդէսի Ընթացքին Ներկայացուելիք Դաշնամուրի Նուագներուն Համար Ընտրուած Են Հետեւեալ Նուագները. «Ես Ալ Կրնամ Ապրիլ» Գրութեան Համար Նուագուհի Ալիս Ալեքսանեան Պիտի Նուագէ Ազգային Նուագ, Իսկ «Ոսկի Ծիրանի» Գրութեան Համար Նուագուհի Ռոզա Ալեքսանեան Պիտի Նուագէ Ազգային Նուագ։